

**«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ  
2010Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)**



Իրացվել է	Քանակ		Հազ. դրամ	Հազ. դոլար
Մաքուր մոլիբդենի ջարդոն	տն	117.5	1,432,809.0	3,973.3
Մաքուր մոլիբդենի ջարդոնի գների վերահաշվարկ*	-	-	42,759.5	118.6
Կալիումի պերոքսիդ	կգ	0.0	0.0	0.0
Հյուրանոցային ծառայություն	-	-	9,685.5	26.8
<b>Ընդամենը</b>			<b>7,340,598.0</b>	<b>20,356.0</b>

\* Հաշվետու եռամսյակում արտադրանքի վաճառքից հետո ընկած ժամանակահատվածում արտադրանքի գները աճել են, այդ պատճառով դրանց դիմաց վճարվել է ավելի բարձր գին:

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 22.11.2010-09.12.2010 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզության վարչությունը ընկերությունում իրականացրել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում արձանագրվել է խախտում շահութահարկի (ներառյալ հարկային գործակալի կողմից պահվող (զանձվող)) գծով և տնտեսվարող սուբյեկտին առաջարկվել է տասնօրյա ժամկետում բյուջե փոխանցել 35,120 հազ. դրամ: Նշված գումարն ամբողջությամբ հաշվանցվել է:

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը պայմանավորված է համաշխարհային շուկայում տեղի ունեցող իրադարձություններով: Դրանցից ամենաէականը Ընկերության արտադրանքի և դրա համար անհրաժեշտ հումքի միջազգային գների փոփոխությունն է, ինչն ուղղակիորեն ազդում է Ընկերության շահույթի վրա: Հաշվետու եռամսյակում և՛ հումքի, և՛ արտադրանքի գները աճել են: Հումքի և արտադրանքի գները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համար բարձր են:

Մյուս ռիսկը արժույթային ռիսկն է: Արտարժույթների փոխարժեքները հաշվետու եռամսյակում համեմատաբար կայուն են եղել, այդ պատճառով դրանց տատանումները Ընկերության հիմնական ֆինանսական ցուցանիշների վրա քիչ են ազդել:

Նշված երկու գործոններն էլ իրենց անորոշությամբ էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 3 և թիվ 4 աղյուսակներում:

Աղյուսակ 3

**ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2010թ. IV եռ.**

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-6,414,921
Իրացման ծախսեր	-720
Վարչական ծախսեր	-206,644
Գործառնական գործունեությունից շահույթ	718,313
Այլ գործառնություններից շահույթ	64,961
Այլ ոչ գործառնական շահույթ, որից՝	1,791,222

<b>Ցուցանիշ</b>	<b>Հազ. դրամ</b>
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	90,339
Ֆինանսական ներդրումներից	1,740,772
Ակտիվներին վերաբերող շնորհներից	9,015
Վարկերի և փոխառությունների գծով	-11,674
Այլ շահույթ (վնաս)	-37,230
2010թ. 4-րդ եռամսյակի շահույթ	2,567,088
Շահութահարկի գծով ծախս (նվազագույն շահութահարկ)	-715,197
2010թ. 4-րդ եռամսյակի զուտ շահույթ	1,851,891
Դեբիտորական պարտք	3,066,942
Կրեդիտորական պարտք	5,581,940

Աղյուսակ 4

**ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2010թ. IV եռ.**

<b>Ցուցանիշի անվանումը</b>	<b>01.01.2011 թ.</b>
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	26888.7
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	5.4 %
Ակտիվների շահութաբերություն (ROA)	4.7 %
Զուտ շահույթի մարժա (NPM)	25.3 %
Կապիտալի համարժեքության գործակից	86.1 %
Ֆինանսական կախվածության գործակից	16.2 %
Բացարձակ իրացվելության գործակից	3.8
Ընթացիկ իրացվելության գործակից	4.3
Ընդհանուր իրացվելության գործակից	4.7
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	96.7
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	3.8
Պաշարների շրջանառելիության գործակից	3.2
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	113.9
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	1.2
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	303.4

Ընկերության աշխատավարձի ֆոնդը՝ 311,974.4 հազ. դրամ է, աշխատողների միջին ցուց. թիվը՝ 547 մարդ, իսկ միջին աշխատավարձը՝ 190,112 դրամ:

**2) Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:**

Ընկերությունը ներկայում Տիգրան Մեծ պողոտային հարող իրեն պատկանող տարածքում շարունակում է իրականացնել լայնածավալ շինարարական աշխատանքներ:

Զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ չեն արվել:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Գենիկ Կարապետյան	տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն	Որպես տնօրենների խորհրդի նախագահ՝ տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար, որպես գլխավոր տնօրեն՝ ընթացիկ գործունեության (այդ թվում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման) համար
Դավիթ Կարապետյան	Փոխտնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Զիվան Գյուլումյան	Գլխավոր ինժիներ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Եղիշե Ստեփանյան	Գլխավոր ինժիների տեղակալ, տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով
Սիլվա Խաչատրյան	Տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար
Կարեն Սահակյան	Տնօրենների խորհրդի անդամ	արտադրության գծով